ՀԱՅ-ԼԵՀԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

2017 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կլոր սեղան անցկացվեց հայ-լեհական առնչությունների վերաբերյալ, որը կազմակերպել էին Արևելագիտության ինստիտուտը և Վարշավայի համալսարանը: Համառոտ զեկուցումներով հանդես եկան ԱԻ տնօրեն ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ԱԻ Քրիստոնյա Արևելք բաժնի վարիչ Ազատ Բոզոյանը, ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ Հայկ Գրիգորյանը: Լեհական կողմից մասնակցում էին Վարշավայի համալսարանի իրավագիտության և կառավարման ֆակուլտետի ներկայացուցիչներ Յարոսլավ Տուրլուկովսկին, Միխալ Սադլովսկին, Պատրիկ Կալինովսկին և Յակուբ Խովանեցը:

Ռ. Սաֆրաստյանը և Յ. Տուրլուկովսկին հանդես եկան բացման խոսքով և բարձր գնահատեցին հայ-լեհական հարաբերություններն ու ընդգծեցին նման գիտական քննարկումներ անցկացնելու կարևորությունը:

Ազատ Բոզոյանը ներկայացրեց Լեհաստանում հայերի գործունեությունը և լեհական պետության հետ իրավապայմանագրային հարաբերությունները XIV-XVIII դարերում, հայերի կաթոլիկացման գործընթացը, ինչպես նաև հայկական համայնքի մշակութային և կրոնական կյանքը:

Հայկ Գրիգորյանն անդրադարձավ XIX դարում Ռուսական կայսրության դեմ լեհական ապստամբությունների վերաբերյալ արձագանքներին արևմտահայ և արևելահայ մամուլում: Նշվեց, որ եթե արևմըտահայ մամուլում համակրանք կար լեհական ապստամբությունների հանդեպ, ապա արևելահայ մամուլում ճիշտ հակառակ պատկերն էր. այդ մասին գրում էին քննադատաբար: Գրիգորյանն անդրադարձավ նաև XVIII դարում Լեհաստանի հայ համայնքի կյանքին, հայերի նկատմամբ Լեհաստանի իշխանությունների վարած քաղաքականությանը:

Հայ-լեհական հարաբերությունների արդի փուլի վերաբերյալ դիտարկումներով հանդես եկավ Ռ. Սաֆրաստյանը: Նա կարևորեց երկու երկրների կապերի զարգացումը հատկապես ներկայիս աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում: Ըստ ակադեմիկոս Սաֆրաստյանի՝ երկու երկրների հարաբերություններում հաղթահարվում է պասիվության շրջանը: Ռ. Սաֆրաստյանը հարաբերությունների զարգացման գործում ընդգծեց խորհրդարանական դիվանագիտության դերը:

Զեկուցումներից հետո քննարկում տեղի ունեցավ: Կլոր սեղանի մասնակիցները ներկայացրին իրենց տեսակետները պատմության և քաղաքականության մի շարք հարցերի վերաբերյալ: